Հավելված 1
«ԿԿՀ-ԳՆ-ՄԱԾՁԲ-25/16 » ծածկագրով
մեկ անձից գնման ընթացակարգի հրավերի

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ-ԻՆ

ՀԱՅՏ

«ԿԿՀ-ԳՆ-ՄԱԾՁԲ-25/16» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

Սույնով «ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԲԲԸ-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ-ի կողմից կազմակերպված մեկ անձից գնման ընթացակարգին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված մեկ անձից գնման ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, «ՔԱՂԱՔԱՇԻՆԼԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԲԲԸ-ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գնով.

ՀՀ դրամ

Չափա-բաժնի համարը	Ծառայության անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Միավորի գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	Սեյսմիկ ծառայություններ	200000		200000 /Երկու հարյուր հազար/

«ՔԱՂԱՔԱՇԻՆԼԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԲԲԸ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ՝ Ա. ԳՅՈՒԼԽԱՍՅԱՆ

(ստորագրություն)
Կ.Տ

«22» հոկտեմբերի 2025թ.
(ամսաթիվը. ամիսը)

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԿԿՀ-ԳՆ-ՄԱԾՁԲ-25/16

«22» հոկտեմբերի 2025թ.

ք. Երևան

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ-ը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Ա. Հարությունյանի, որը գործում է ՊՄ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԼՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԲԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ա. Գյուլխասյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **սեյսմիկ ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 2):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության գինը կազմում է **200000 (Երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:** Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնի 30%-ը, Պատվիրատուն կարող է փոխանցել Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համՓԲԸայնության Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի Վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Գնորդի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: ՀամՓԲԸայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	Կատարող
«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ	«Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ
ՀՀ, ք.Երևան 0009, Կորյունի փող. 15,	ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ- Զեյթուն, 0069,
Հայաստանի Հանրապետության ֆինանսների	Ա.Ահարոնյան փ., 3
նախարարության գործառնական վարչություն	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 900011019057	Հ/Հ՝ 1930046300600100
ՀՎՀՀ՝ 00171676	ՀՎՀՀ՝ 00007335
Գլխավոր քարտուղար՝ Ա. Հարությունյան	Գլխավոր տնօրեն՝ Ա.Գյուլխասյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
«22» հոկտեմբերի 2025թ. կնքված
N ԿԿՀ-ԳՆ-ՄԱԾՁԲ-25/16 ծածկագրով
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

ծառայության							
չ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ
1	71351380/1	Սեյսմիկ ծառայություններ	Կատարողը պետք է իրականացնի Երևան քաղաքի Կորյունի 15, 17, 19 հասցեում գտնվող շենքի տեխնիկական վիճակի ու սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատման և հետագա շահագործման հնարավորության և անհրաժեշտ միջոցառումների կիրառություն: Համաձայն ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի թիվ 274-Ն որոշման 2-րդ կետի՝ շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննություններն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջներին համապատասխան, շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության ոլորտում լիցենզավորված անձանց կողմից (այսուհետ՝ կատարող)՝ պայմանագրային հիմունքներով: Համաձայն Քաղաքաշինության նախարարության «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիակակն վիճակի հետազննության մեթոդական ցուցումների» 15-րդ կետի՝ «Շենքերի ծրագրային հետազննությունը և դրանց տեխնիկական վիճակի գնահատումը պետք է կատարվի ոչ ուշ, քան 10 տարին մեկ»: Համաձայն նույն ցուցումների 16-րդ կետի 3-րդ ենթակետի՝ «Շենքերի արտաձրագրային հետաքննությունը պետք է կատարվի. 1. Շենքի գործառնական նշանակության փոփոխության դեպքում, 2. Շահագործման պայմանների փոփոխության դեպքում (մասնավորապես բեռնվածքների մեծացման), 3. Շենքերի կոնստրուկցիաներում վնասվածքների առկայության դեպքում, որոնք առաջացել են երկրաշարժի, սողանքների, փոթորիկների, հրդեհների, հիմնահատակ գրունտների անհավասարաչափ նստվածքների և այլ ազդեցությունից: Կազմակերպությունը պետք է գնահատի է նաև շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիության մակարդակի աստիճանը: Ստորև ներկայացվում է դիտողագործիքային հետաքննության ընթացքում կատարվելիք աշխատանքները. Օբյեկտի հետազննություն • նախագծային և կատարողական փաստաթղթերի համակարգում և վերլուծություն, եթե այդպիսիք պահպանվել են. • ուժեղ երկրաշարժերից և վթարային իրավիճակից հետո կառուցվածքում կատարված վերականգնողական աշխատանքների նախագծային փաստաթղթերի վերլուծություն, • նշել կառուցվածքի կոնստրուկտիվ տարրերի և նրանց միջև կապերի վնասվածքները (ճաքեր, հենարանների տեղաշարժ, շարվածքների շերտավորում և կքում, բետոնի փշրվածք, ամրանների կքում և այլն), • որոշել կոնստրուկցիաների վնասվածության բնույթն ու վնասվածքի միջին աստիճանն, ինչպես նաև առավել դեֆորմացված կոնստրուկցիաների վնասվածքի բնույթն ու աստիճանը, • բացահայտել վթարային և վտանգավոր տեղերի առկայությունը, • առանձին կոնստրուկցիաների դեֆորմացիաների չափում, • կրող կոնստրուկցիաների նյութերի ամրության բնութագրերի որոշում չքայքայող եղանակով, • պարզել օբյեկտի կոնստրուկտիվ լուծումների համապատասխանությունը գործող նորմերին, • օբյեկտի տեխնիկական վիճակի գնահատում • օբյեկտի սեյսմիկ խոցելիության գնահատում, • առաջարկություններ օբյեկտի անվտանգ շահագործման հնարավորության	դրամ	200000	1	200000

			և անհրաժեշտ միջոցառումների կիրառության վերաբերյալ. • օբյեկտի զուտ ուժողացման աշխատանքների միջոցառումների իրականացման համար մոտավոր արժեքի հաշվում: Ծառայությունը մատուցվում է Կատարողի ուժերով և իր միջոցների հաշվին (ներառյալ ծառայության մատուցման համար անհրաժեշտ ապրանքները և նյութերը):				
	Ընդամենը						**200000**

***Ծառայությունների մատուցման ժամկետը՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև . .2025 թվականը:**

Պ ա տ վ ի ր ա տ ո ւ

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ
ՀՀ, ք.Երևան 0009, Կորյունի փող. 15,
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011019057
ՀՎՀՀ՝ 00171676
Գլխավոր քարտուղար՝ Ա.Հարությունյան

/ստորագրություն/

Կ ա տ ա ր ո ղ

«Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ
ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ- Զեյթուն, 0069,
Ա.Ահարոնյան փ., 3
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1930046300600100
ՀՎՀՀ՝ 00007335
Գլխավոր տնօրեն՝ Ա.Գյուլխասյան

/ստորագրություն/

Հավելված 2
22 հոկտեմբերի 2025թ. կնքված
N ԿԿՀ-ԳՆ-ՄԱԾՁԲ-25/16 ծածկագրով
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության														
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*											
չ/հ	գնումների պլան-ով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	71351380/1	Սեյսմիկ ծառայություններ										200000	200000	200000	200000

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

Պ ա տ վ ի ր ա տ ո ւ

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ
ՀՀ, ք.Երևան 0009, Կորյունի փող. 15,
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011019057
ՀՎՀՀ՝ 00171676
Գլխավոր քարտուղար՝ Ա. Հարությունյան

/ստորագրություն/
L.S

Կ ա տ ա ր ո ղ

«Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ
ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ- Զեյթուն, 0069,
Ա.Ահարոնյան փ., 3
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1930046300600100
ՀՎՀՀ՝ 00007335
Գլխավոր տնօրեն՝ Ա.Գյուլխասյան

/ստորագրություն/
L.S

Հավելված 3

Հավելված 2
22.10.2025 թ. կնքված
№ԿԿՀ-ԳՆ-ՄԱԾՁԲ-25/15 ծածկագրով գնման պայմանագրի

Պատվիրատու

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով» ՊՄ
ՀՀ ք.Երևան, Կորյունի փող 19
ՀՀ ՖԻՆ. Նախ. գործառ. վարչ.
Հ/Հ 900011019057
ՀՎՀՀ 00171676

Պայմանագրի կողմ

<<ՔԾՓԿ>> ԲԲԸ
ՀՀ ք.Երևան, Ա.Միաքոնյան 3
<<Կոնվերբանկ>> ՓԲԸ, Զեյթուն մ/ճ
Հ/Հ 1930046300600100
ՀՎՀՀ 00007335

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

22.10.2025թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ «Երևանի, Կենտրոն վարչական շրջան, Կորյունի փողոց №19 հասցեում գտնվող շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ» եզրակացություն:
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « 22 » « 10 » 2025 թ.
Պայմանագրի համարը՝ №ԿԿՀ-ԳՆ-ՄԱԾՁԲ-25/15
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « 06 » « 11 » 2025 թ. դուրս գրված B0093684743 հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների						Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
	Եզրակացություն	«Երևանի, Կենտրոն վարչական շրջան, Կորյունի փողոց №19 հասցեում գտնվող շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ» եզրակացություն	22.10.2025թ. 06.11.2025թ.	1			200.000 (երկու հարյուր հազար)	
							200.000	

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և տեղեկանքն եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մաս:

Ծառայությունն ընդունեց

Ա.Գրիգորյան
գլխավոր տնտեսագետ

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

Ա.Հարությունյան
գլխավոր տնտեսագետ

Կ.Տ.

Հավելված 2
22.10.2025 թ. կնքված
№ԿԿՀ-ԳՆ-ՄԱԾՁԲ-25/15 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով» ՊՄ -ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՔՕՓԿ» ԲԲԸ -ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2025 թ. 22. 10 -ին կնքված №ԿԿՀ-ԳՆ-ՄԱԾՁԲ-25/15
(պայմանագրի կնքման ամսաթիվը) (պայմանագրի համարը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2025 թ. 06 . 11 -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
«Երևանի, Կենտրոն վարչական շրջան, Կորյունի փողոց №19 հասցեում գտնվող շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ» եզրակացություն:	հատ	1

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ

Ստորագրություն